

ԾԱՑՐԱԳՈՒՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

ՓԱՐԻԶ

ԽՂՃՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, յուր ամբողջ հավատացյալ հոտի և բարձրագույն հոգևորականության անունից, հանձինս Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Էջմիածնա Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի, Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիո, Երուսաղեմի ու Պոլսո Պատրիարքարանների և թեմական բոլոր Առաջնորդների, ի սրտե ողջունում և օրհնում է կուսակցության գործիչների կապի միջազգային կոմիտեի նախաձեռնությունը՝ խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի հրավիրման առթիվ, քանզի խաղաղություն ժողովուրդների և բարյացակամություն մարդկանց միջև— է՝ առաջին պատգամը քրիստոնեական եկեղեցու:

Աստվածահաճո և ազնիվ Ձեր այս կոչը, ի պաշտպանություն խաղաղության, պետք է լսվի և միահամուռ հավանություն գտնի քրիստոնեական համայն աշխարհի կողմից:

Հայ եկեղեցին իր սրբազան պարտքն է համարում միանալու ազնիվ ձգտումներին բոլոր նրանց, ովքեր առկոչում են ժողովուրդներին միավորվելու՝ հանուն խաղաղության ընդհանուր պաշտպանության:

Հայ ժողովուրդը, որ իր բազմադարյան պատմության ընթացքում բազում պատերազմների ու փորձությունների է հանդիպել և այդ պատերազմների ու սարկության ողջ դառնությունը հաշակել, չի կարող առանց նզովքի ու հողկանքի հիշել իմպերիալիստական ռեակցիայի այն ներկայացուցիչներին, ովքեր աշխարհի բոլոր ժողովուրդներին նորից ուզում են նետել պատերազմների գեհենը և անլուր տանջանքների մատնել նրանց:

Հայ եկեղեցին, իր ամբողջ պատմության ընթացքում, քարոզել է Հայրենիքի պաշտպանության գաղափարը՝ որպես յուրաքանչյուր մարդու սրբազան պարտականություն, դաստիարակել է իր հավատացյալ հոտը՝ իր ժողովրդի ազատության ու անկախության

համար պայքարելու ոգով, կոչ է արել իր իսկ կյանքով պաշտպանելու իր հայրենի հողի անձեռնմխելիությունը և հետ այսու ևս օրհնող կլինի և կոչ կանի իր զավակներին նորանոր սխրագործությունների՝ հանուն իր սրբազան Հայրենիքի պաշտպանության:

Հայ Եկեղեցին օրհնել է իր ժողովրդին, երբ նա վերջին, Հայրենական պատերազմին սրբազան կռվի էր ելել գերմանա-ֆաշիստական բարբարոսների դեմ. և Հայաստանի զավակները մեծ մարտի բոլոր ռազմանակատներում գործոն մասնակցություն են ունեցել՝ հեղելով իրենց արյունը ժողովուրդների ազատության ու անկախության համար, Եվրոպայի ազատագրված ժողովուրդներին ֆաշիստական սարկությունից փրկելու համար: Այսօր, երբ դեռ լիովին չեն բուժվել պատերազմի հասցրած վերքերը ու նոր պատերազմի սպառնալիքը կախվել է մարդկության գլխին, Հայ Եկեղեցին չի կարող չբարձրացնել իր բողոքի ձայնը նոր պատերազմի հրձիգների դեմ և չի կարող բարձրաձայն չհայտարարել, որ ինքը, իր հավատացյալ հոտով հանդերձ, կողմնակից ու պաշտպան է հանդիսանում խաղաղության և դեմ է նոր պատերազմին: Հայ Եկեղեցին ողջունում է խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի բացումը և ի դեմս նրա ողջունում է նաև համայն մարդկության խաղաղության բոլոր համակիրներին ու պաշտպաններին:

Թող ներվի մեզ, Հայ Եկեղեցու ալեզարդ Պետիս, այսօր, այս սուրբ ժամին հիշեցնել քրիստոնեական եկեղեցիների բոլոր պետերին ու հոգևորականությանը, ինչպես և աշխարհի մյուս բոլոր կրոնապետներին ու կրոնների բոլոր սպասավորներին, որ կրոնի հիմնական պահանջը իր սպասավորներից— է՝ շիտակ ու աներկյուղ քարոզել խաղաղության, եղբայրության ու մարդասիրության գաղափարները, եթե անգամ այն դեմ լինի իրենց անձնական կամ առանձին շահամոլ մարդկանց խմբերի շահերին: Այս մեծ նշմարտության դեմ մեղանչել ու մեղանչում են քրիստոնեական մեծ ու փոքր կրոնապետներից շատերն՝ իրենց եկեղեցու սպասավորների հետ միասին, ինչպես և այլադավան կրոնապետներն՝ իրենց հոգևոր պաշտամունքի պաշտոնյաներով հանդերձ, չնայած նոքա ուխտել են կրոնի քարոզիչներ լինելու, մարդասիրության, նշմարտության ու արդարության վեհ գաղափարները խոսքով քարոզելու և գործով կենսագործելու:

Մարդասիրություն, նշմարտություն և արդարություն, սոքա են այն խարիսխը, որի վրա պիտի հիմնվի աշխարհի ապագա տեսական խաղաղությունը, ազգերի անվտանգությունը և նոցա համերաշխ գործունեությունը:

Նոքա յոթցին համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների ընթացքում, երբ միլիոնավոր մարդիկ զոհվեցին, զրկվելով աշխարհի լավագույն արժեքից՝ կյանքից, երբ աշխարհի կուլտուրական խոշոր ստեղծագործությունները ոչնչացան, երբ նյութական անչափ բարիքներ, որոնք միլիոնավոր մարդկանց կյանք ու երջանկություն կարող էին պարգևել, անէացան: Նոքա եգիպտական անապատի սֆինկսների նման առեղծվածային լռություն պահպանեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, փոխանակ գերմանա-ֆաշիստական բարբարոս ռնմակների ձեռքով ավերված երկրներին և պետական անկախությունից զրկված ու սարկության մատնված ժողովուրդներին հուսադրելու և ապագայի նկատմամբ նոցա արդար իրավունքների վերահաստատման հավատ ներշնչելու:

Բազմաթիվ եկեղեցիների պետեր ու սպասավորներ յոթ են և այսօր, երբ աշխարհի մի քանի մեծ պետությունների դեկավարները, անգլո-ամերիկյան ռեակցիոն շրջանների բելադրանքով, ռռնանարում են հրապարակով տրված իրենց խոստումները, ոչնչացնում բոլոր այն նվաճումները, որոնց հաղթանակի համար բոլոր մեծ ու փոքր ազգերը կռվեցին և այսպիսով ամբողջ ողջամիտ ու ազատամիտ մարդկությունը յուր արյան գնով հաղթանակը շահեց: Նրանք Ատլանտյան պակտ և այլ անունների տակ արդեն ստեղծում են Սովետական Միության ու նոր դեմոկրատիայի երկրների ժողովուրդների հանդեպ թշնամաբար տրամադրված գանազան ռազմական միություններ, դրանով իսկ համաշխարհային նոր պատերազմի վտանգի

առաջ կանգնեցնելով ամբողջ աշխարհի ժողովուրդներին:

Սակայն, մենք այսօր իրավունք չունենք լռելու, երբ համայն մարդկության խաղաղ անվտանգության ու խաղաղ կյանքի խնդիրը ենթակա է վտանգի և տեսական պատերազմից հոգնած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառության առաջ:

Մենք այսօր իրավունք չունենք լռելու, այլ պարտավոր ենք հանդես գալու և ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հակասում է համայն ամբողջ մարդկության դավանած կրոնների՝ սիրո և եղբայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին ու շահերին, և խաղաղության գոռավիգ լինելու, պահանջելով Թեհրանում, Յալտայում ու Պոտսդամում մշակված վեհ սկզբունքների անխախտ կիրառումը, որպեսզի պատերազմների ավերիչ գործողությանց ընդմիշտ վախճան դրվեն և համաշխարհային արդար ու տեսական խաղաղության և ազգերի հերդաշնակ գործունեության ու կենցաղի հիմքերը կոփվեն:

Այս է հերկայիս հրամայողական պահանջը քրիստոնեական եկեղեցիներից և մյուս կրոնական հաստատություններից— ուժգին հնչեցնել խաղաղության ու տիեզերական եղբայրության հրավերը մարդկության ականջին, քանզի հրանք պետք է հանդիսանան միջազգային նոր քաղաքականության հիմքը և ազգերի երջանիկ կյանքի աղբյուրը:

Աստվածային օրհնությունն ենք հայցում խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի հաջողության համար և մաղթում ենք Ամենաբարձրյալին, որ Նա զարթեցնե քրիստոնյա պետությունների ղեկավարների քրիստոնեական խիղճը և հոգա, ճշմարտության ու արդարության ձայնին արձագանքելով, խաղաղության ձիրքերին ձեռներին ընդառաջեն իրենց ժողովուրդների ցանկության և հոգա ապագա երջանիկ կյանքի սկիզբը դնեն:

Միաժամանակ Հայրապետական հատուկ շրջաբերականով Մենք դիմում ենք Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիո, Երուսաղեմի Պատրիարքին և բոլոր թեմական Առաջնորդներին, կոչ անելով ըստ ամենայնի գորավիգ լինել Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսին, հնչեցնել իրենց ձայնը բոլոր նրանց դեմ, որոնք ձգտում են նոր պատերազմ հրահրել, և միացնել իրենց ձայնը բոլոր նրանց ձայներին, որոնք իրենց աստվածահաճո գործողություններով ձգտում են կասեցնել մարդկության գլխին կախված նոր արհավիրքը:

Թող Աստված օրհնե խաղաղության գործը և սեր ու բարյացակամություն շնորհե համայն մարդկության:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 7-ն ապրիլի 1949 թ.
Ի Ս. Էջմիածին